ՏԴ/0295/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 հունվարի 2025 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հունվարի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի սեպտեմբերի 3-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արման Լևոնի Ղազումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ

կետերով, Հարություն Արարատի Ղազումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Լազր Աշոտի Ափինյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Սամվել Հայկազի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Նաիրի Գագիկի Մելքումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Վլադիմիր Հարությունի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով թիվ 83154324 (ՏԴ/0295/01/24) քրեական վարույթը:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 5-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունվարի 3-ին որոշում է կայացրել թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 13-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Արման Լևոնի Ղազումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով 2021 թվականի ապրիլի 26-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի,*

խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականն ընկած ժամանակահատվածի փաստացի գործունեությունը ղեկավարող անձ, 31.03.2023 թվականից՝ նշված ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն, 2018 թվականի հոկտեմբերի 10-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԻԴ» ՍՊ ընկերության տնօրեն, 2018 թվականի ապրիլի 6-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում և սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության փաստացի գործունեությունը ղեկավարող անձ, 2021 թվականի հոկտեմբերի 21-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն, 2022 թվականի փետրվարի 25-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն, 2022 թվականի ապրիլի 13-ին գրանցում ստացած մասնագիտական խանութներում այլ մանրածախ առևտրով զբաղվող ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի փաստացի գործունեությունը ղեկավարող անձ, տնօրինելով իրականացված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված ֆինանսական միջոցները ու հանդիսանալով այդ ընկերությունների ու անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատու անձանց կատարման համար պարտադիր ցուցումներ տալու, նրանց որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող և նրանց գործունեությունը փաստացի ղեկավարող անձ, «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության պատասխանատու անձ հանդիսացող՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականն ընկած ժամանակահատվածում նշված ընկերության հիմնադիր-տնօրեն Հարություն Արարատի Ղազումյանի, «ՍԻԴ» ՍՊ ընկերության պատասխանատու անձ՝ նշված ընկերության հիմնադիր Լազր Աշոտի Ափինյանի, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ

ընկերության պատասխանատու անձ՝ նշված ընկերության հիմնադիր-տնօրեն Սամվել Հայկազի Հովհաննիսյանի և «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ, «ՍԻԴ» ՍՊ, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի հաշվապահ Նաիրի Գագիկի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներից ելնելով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 351.312.698 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով Հարություն Ղազումյանի, Լազր Ափինյանի, Սամվել Հովհաննիսյանի, Նաիրի Մելքումյանի միջոցով թաքցրել է «ՀԱՐՈՒԹ96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ ԱՁ-ի հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու, նշված ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ խանութներից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին, ով վերը նշված ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ խանութներում ներդրել է «1C» առևտրային ծրագիրը, որը համակցել է իր հաշվառման հասցեի՝ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի 77/5 տան նկուղում թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգին և սպասարկել այն:

Խանութներում ներդրված «1C» առևտրային ծրագրի և էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «ՀԱՐՈՒԹ96», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի իրացման իրական շրջանառության վերաբերյալ տվյալները կուտակվել են էլեկտրոնային սերվերային համակարգում, իսկ հիշյալ հարկ վճարողների կողմից իրականացված վաճառքների մի մասը թաքցվել է և չի ուղարկվել հարկային մարմին:

Այդ կերպ Արման Լևոնի Ղազումյանը Վլադիմիր Հարությունի Սարգսյանի օժանդակությամբ վերը նկարագրված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման օգտագործմամբ 17.03.2021 թվականից

մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում Հարություն Ղազումյանի, Լազր Ափինյանի, Սամվել Հովհաննիսյանի, Նաիրի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ թաքցրել է «ՀԱՐՈՒԹ96», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի իրացման իրական շրջանառությունը և առանձնապես խոշոր չափերով՝ ընդամենը 351.312.698 դրամ (ԱԱՀ՝ 273.537.229 դրամ, շահութահարկ՝ 75.207.098 դրամ, շրջանառության հարկ՝ 2.568.371 դրամ) հարկ չվճարելու նպատակով ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ: (…)»[1]*:*

5.1. Հարություն Արարատի Ղազումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով 2021 թվականի ապրիլի 26-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականն ընկած ժամանակահատվածի հիմնադիր-տնօրեն, նշված ժամանակահատվածում այդ ընկերության պատասխանատու անձ՝ ընկերության փաստացի ղեկավարմամբ զբաղվող Արման Լևոնի Ղազումյանի, հաշվապահությամբ զբաղվող Նաիրի Գագիկի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներից ելնելով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 55.491.403 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով թաքցրել է «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու և նշված ընկերության կողմից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 253-255:

ժամանակահատվածում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթրեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին, ով վերը նշված ընկերության առևտրի օբյեկտում ներդրել է «1C» առևտրային ծրագիրը, որը համակցել է իր հաշվառման հասցեի՝ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի 77/5 տան նկուղում թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգին և սպասարկել այն: Առևտրի օբյեկտում ներդրված «1C» առևտրային ծրագրի և էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը՝ վաճառված ապրանքները և դրանց դիմաց փաստացի ստացված գումարները չեն ուղարկվել հարկային մարմին, այլ կուտակվել են էլեկտրոնային սերվերային համակարգում:

Այսպիսով, Հարություն Արարատի Ղազումյանը Վլադիմիր Հարությունի Սարգսյանի օժանդակությամբ վերը նկարագրված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման օգտագործմամբ 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում Արման Ղազումյանի, Նաիրի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ թաքցրել է «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը և առանձնապես խոշոր չափերով՝ ընդամենը 55.491.403 ՀՀ դրամ (ԱԱՀ՝ 46.415.140 դրամ, շահութահարկ՝ 9.076.263 դրամ) հարկ չվճարելու նպատակով ընկերության հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ: (…)»[2]*:*

5.2. Լազր Աշոտի Ափինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով 2018 թվականի հոկտեմբերի 10-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԻԴ» ՍՊ ընկերության հիմնադիր, ընկերության տնօրեն Արման Լևոնի Ղազումյանի, հաշվապահությամբ*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 282-283:

զբաղվող Նաիրի Գագիկի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, շահադիպական դրդումներից ելնելով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 42.581.086 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով՝ թաքցրել է «ՍԻԴ» ՍՊ ընկերության հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու և նշված ընկերության կողմից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթրեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին, ով վերը նշված ընկերության առևտրի օբյեկտում ներդրել է «1C» առևտրային ծրագիրը, որը համակցել է իր հաշվառման հասցեի՝ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի 77/5 տան նկուղում թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգին և սպասարկել այն:

Առևտրի օբյեկտում ներդրված «1C» առևտրային ծրագրի և էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «ՍԻԴ» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը՝ վաճառված ապրանքները և դրանց դիմաց փաստացի ստացված գումարները չեն ուղարկվել հարկային մարմին, այլ կուտակվել են էլեկտրոնային սերվերային համակարգում:

Այսպիսով, Լազր Աշոտի Ափինյանը Վլադիմիր Հարությունի Սարգսյանի օժանդակությամբ վերը նկարագրված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման օգտագործմամբ 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում Արման Ղազումյանի, Նաիրի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, վերջիններիս միջոցով ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ թաքցրել է «ՍԻԴ» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը և առանձնապես խոշոր չափերով՝ ընդամենը 42.581.086 ՀՀ դրամ (ԱԱՀ՝ 36.830.652 դրամ, շահութահարկ՝ 5.750.434 դրամ) հարկ չվճարելու

նպատակով ընկերության հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ: (…)»[3]*:*

5.3. Սամվել Հայկազի Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով 2018 թվականի ապրիլի 6-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն և նշված ընկերության պատասխանատու անձ՝ ընկերության փաստացի ղեկավարմամբ զբաղվող Արման Լևոնի Ղազումյանի, հաշվապահությամբ զբաղվող Նաիրի Գագիկի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներից ելնելով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 57.077.568 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով միջոցով թաքցրել է «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու և նշված ընկերության կողմից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին, ով վերը նշված ընկերության առևտրի օբյեկտում ներդրել է «1C» առևտրային ծրագիրը, որը համակցել է իր հաշվառման հասցեի՝ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի 77/5 տան նկուղում թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգին և ապաստարկել այն: Առևտրի օբյեկտում ներդրված «1C» առևտրային ծրագրի և էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը՝ վաճառված ապրանքները և դրանց դիմաց փաստացի ստացված գումարները չեն ուղարկվել հարկային մարմին, այլ կուտակվել են էլեկտրոնային սերվերային համակարգում:*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 275-276:

Այսպիսով, Սամվել Հայկազի Հովհաննիսյանը Վլադիմիր Հարությունի Սարգսյանի օժանդակությամբ վերը նկարագրված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման օգտագործմամբ 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում Արման Ղազումյանի, Նաիրի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ թաքցրել է «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը և առանձնապես խոշոր չափերով՝ ընդամենը 57.077.568 ՀՀ դրամ (ԱԱՀ՝ 30.764.255 դրամ, շահութահարկ՝ 26.313.313 դրամ) հարկ չվճարելու նպատակով ընկերության հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ: (…)»[4]:

5.4. Նաիրի Գագիկի Մելքումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով «ՀԱՐՈՒԹ96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի փաստացի հաշվապահությունը վարող անձ, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատասխանատու լինելով ընկերության հաշվապահական հաշվառումը կազմակերպելու, վարելու, հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ, հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթեր ու տեղեկություններ սահմանված ժամկետում կազմելու, հարկային մարմին ներկայացնելու, հարկերը ճիշտ և ինքնուրույն հաշվարկելու ու հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու համար, «ՀԱՐՈՒԹ96», «ՍԻԴ» ՍՊ ընկերությունների տնօրեն, «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների հիմնադիր-տնօրեն, ինչպես նաև «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի գործունեությունը փաստացի ղեկավարող Արման Լևոնի Ղազումյանի, «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականը ընկած ժամանակահատվածի հիմնադիր-տնօրեն Հարություն Արարատի Ղազումյանի, «ՍԻԴ» ՍՊ ընկերության հիմնադիր*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 268-269:

Լազր Աշոտի Ափինյանի, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն Սանվել Հայկազի Հովհաննիսյանի հետ նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով՝ 351.312.698 դրամ հարկեր չվճարելու նպատակով, 2021-2023 թվականների ընթացքում թաքցրել է վերը թվարկված ՍՊ ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու, վերը թվարկված ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ բոլոր խանութներից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 2021-2023 թվականների ընթացքում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթրեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին:

Այսպիսով, Նաիրի Գագիկի Մելքումյանը 2021-2023 թվականների ընթացքում վերը նշված անձանց հետ նախնական համաձայնությամբ, Վլադիմիր Սարգսյանի օժանդակությամբ ընդհանուր 351.312.698 ՀՀ դրամ պետական բյուջե վճարման ենթակա հարկեր (ԱԱՀ՝ 273.537.229 դրամ, շահութահարկ՝ 75.207.098 դրամ, շրջանառության հարկ՝ 2.568.371 դրամ) չվճարելու նպատակով ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ «ՀԱՐՈՒԹ96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ և թաքցրել հարկման օբյեկտը: (…)»[5]:

5.5. Վլադիմիր Հարությունի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, հանդիսանալով 2009 թվականի մայիսի 26-ին պետական գրանցում ստացած և ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթրեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր, վճարի դիմաց հանցանքի կատարման համար*

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 261-262:

գործիքներ ու միջոցներ տրամադրելու և խոչընդոտներ վերացնելու եղանակով, շահադիտական դրդումներից ելնելով, 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում, ոչ մասնագիտական հանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՀԱՐՈՒԹ 96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների, ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի փաստացի գործունեությունը ղեկավարող անձի՝ Արման Լևոնի Ղազումյանի ներգրավմամբ վճարի դիմաց հանցանքի կատարման համար գործիքներ և միջոցներ տրամադրելու եղանակով, շահադիտական դրդումներից ելնելով, օժանդակել է Արման Ղազումյանի, «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն Հարություն Արարատի Ղազումյանի, «ՍԻԴ» ՍՊ ընկերության հիմնադիր Լազր Աշոտի Ափինյանի, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն Սամվել Հայկազի Հովհաննիսյանի, ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի և «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ, «ՍԻԴ» ՍՊ, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի հաշվապահ Նաիրի Գագիկի Մելքումյանի կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով՝ 351.312.698 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով նշված ՍՊ ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկման օբյեկտը թաքցնելուն և հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելուն:

Այսպես.

Վլադիմիր Հարությունի Սարգսյանը վճարի դիմաց հանցանքի կատարման համար գործիքներ ու միջոցներ տրամադրելու և խոչընդոտներ վերացնելու եղանակով, շահադիտական դրդումներից ելնելով 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում, 2021 թվականի ապրիլի 26-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական հանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՀԱՐՈՒԹ 96» ՍՊ ընկերության՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականն ընկած ժամանակահատվածի փաստացի գործունեությունը ղեկավարող անձ, 31.03.2023 թվականից՝ նշված ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացած, 2018

թվականի հոկտեմբերի 10-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԻԴ» ՍՊ ընկերության տնօրեն, 2018 թվականի ապրիլի 6-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում և սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության փաստացի գործունեությունը ղեկավարող անձ, 2021 թվականի հոկտեմբերի 21-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն, 2022 թվականի փետրվարի 25-ին պետական գրանցում ստացած, ոչ մասնագիտական խանութներում սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտրով զբաղվող «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն, 2022 թվականի ապրիլի 13-ին գրանցում ստացած մասնագիտական խանութներում այլ մանրածախ առևտրով զբաղվող ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի փաստացի գործունեությունը ղեկավարող անձ հանդիսացող Արման Լևոնի Ղազումյանի ներգրավմամբ վճարի դիմաց հանցանքի կատարման համար գործիքներ և միջոցներ տրամադրելու եղանակով, շահադիտական դրդումներից ելնելով, օժանդակել է Արման Ղազումյանի, «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն Հարություն Արարատի Ղազումյանի, «ՍԻԴ» ՍՊ ընկերության հիմնադիր Լազր Աշոտի Ափինյանի, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրեն Սամվել Հայկազի Հովհաննիսյանի, ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի և «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ, «ՍԻԴ» ՍՊ, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի հաշվապահ Նաիրի Գագիկի Մելքումյանի կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով՝ 351.312.698 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով նշված ՍՊ ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկման օբյեկտը թաքցնելուն և հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելուն:

Մասնավորապես՝ Արման Լևոնի Ղազումյանը, տնօրինելով իրականացված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված ֆինանսական

միջոցները ու հանդիսանալով այդ ընկերությունների ու անհատ ձեռնարկատիրոջ պատասխանատու անձանց կատարման համար պարտադիր ցուցումներ տալու, նրանց որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող և նրանց գործունեությունը փաստացի ղեկավարող անձ, «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ ընկերության պատասխանատու անձ հանդիսացող՝ 26.04.2021 թվականից մինչև 31.03.2023 թվականն ընկած ժամանակահատվածում նշված ընկերության հիմնադիր-տնօրեն Հարություն Արարատի Ղազումյանի, «ՍԻԴ» ՍՊ ընկերության պատասխանատու անձ՝ նշված ընկերության հիմնադիր Լազր Աշոտի Ափինյանի, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերության պատասխանատու անձ՝ նշված ընկերության հիմնադիր-տնօրեն Սամվել Հայկազի Հովհաննիսյանի, ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի պատասխանատու անձ՝ Հասմիկ Լևոնի Աղավելյանի և «ՀԱՐՈՒԹ96» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ» ՍՊ, «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ, «ՍԻԴ» ՍՊ, «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի հաշվապահ Նաիրի Գագիկի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներից ելնելով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 351.312.698 ՀՀ դրամ հարկեր չվճարելու նպատակով Հարություն Ղազումյանի, Լազր Ափինյանի, Սամվել Հովհաննիսյանի, Հասմիկ Աղավելյանի, Նաիրի Մելքումյանի միջոցով թաքցրել է «ՀԱՐՈՒԹ96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ ԱՁ-ի հարկման օբյեկտը և հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, որպիսի հանցավոր մտադրությունն անխոչընդոտ իրագործելու, նշված ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ խանութներից ստացվող եկամուտները թաքցնելու և միաժամանակ իրական շրջանառությունը վերահսկելու համար 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում ներգրավել է ծրագրային ապահովման ոլորտում գործունեություն իրականացնող «Ակթրեյդ-Սոֆթ» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Վլադիմիր Հարությունի Սարգսյանին, ով վերը նշված ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ խանութներում ներդրել է «1C» առևտրային ծրագիրը, որը համակցել է իր հաշվառման հասցեի՝ Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի 77/5 տան նկուղում թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգին և ապասարկել այն:

Խանութներում ներդրված «1C» առևտրային ծրագրի և էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «ՀԱՐՈՒԹ96», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի իրացման իրական շրջանառության վերաբերյալ տվյալները կուտակվել են էլեկտրոնային սերվերային համակարգում, իսկ հիշյալ հարկ վճարողների կողմից իրականացված վաճառքների մի մասը թաքցվել է և չի ուղարկվել հարկային մարմին:

Այդ կերպ Վլադիմիր Հարությունի Սարգսյանն օժանդակել է Արման Լևոնի Ղազումյանին վերը նկարագրված ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման օգտագործմամբ 17.03.2021 թվականից մինչև 20.02.2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում Հարություն Ղազումյանի, Լազր Ափինյանի, Սամվել Հովհաննիսյանի, Նաիրի Մելքումյանի հետ նախնական համաձայնությամբ, ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ, 61-րդ, 63-րդ, 104-րդ, 105-րդ, 125-րդ, 256-րդ, 257-րդ և 258-րդ հոդվածների խախտմամբ «ՀԱՐՈՒԹ96», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018» ՍՊ ընկերությունների և ՀԱՄՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ Ա/Ձ-ի իրացման իրական շրջանառությունը թաքցնելուն և առանձնապես խոշոր չափերով՝ ընդամենը 351.312.698 դրամ (ԱԱՀ՝ 273.537.229 դրամ, շահութահարկ՝ 75.207.098 դրամ, շրջանառության հարկ՝ 2.568.371 դրամ) հարկ չվճարելու նպատակով ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելուն: (…)»[6]*:*

6. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանն արձանագրում է, որ քրեական գործի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել մեղադրյալներին վերագրվող հանցանքների կատարման վայրը, բացառությամբ՝ մեղադրյալ Վլադիմիր Սարգսյանի, այլապես քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում նշում կլիներ նաև դրա մասին: Վերջինիս դեպքում ենթադրյալ*

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 289-292:

հանցանքի կատարման վայր հանդիսացել է Երևան քաղաքի Բաղրամյան 77/5 հասցեն (...): Բացի այդ, ըստ մեղադրական եզրակացության, Երևան քաղաքի Բաղրամյան 77/5 հասցեում 2023 թվականի փետրվարի 21-ից 22-ը կատարվել է խուզարկություն, որի արդյունքում հայտնաբերվել և առգրավվել է նշված էլեկտրոնային սերվերային համակարգերը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալներ, մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով, ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը)»:

Նշված հոդվածի սահմանումից ակնհայտ է, որ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ, ի թիվս այլնի, պետք է նշվի մեղադրյալին մեղսագրվող արարքի կատարման տեղը: Օրենսդրի այս պահանջն ինքնանպատակ չէ, քանի որ միայն դրա առկայության դեպքում կարելի է որոշել, նախ՝ քրեական օրենքի գործողությունը՝ քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ տարածքից դուրս կատարվելը, ինչպես նաև մեղադրական եզրակացությամբ քրեական վարույթը դատարան ուղարկելիս, կոնկրետ այն դատարանը, որին ընդդատյա է քրեական վարույթը: Սույն դեպքում քրեական վարույթում առկա՝ ինչպես հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում, այնպես էլ մեղադրական եզրակացության մեջ, ենթադրյալ հանցանքների կատարման վայրի վերաբերյալ նշում ընդհանրապես չկա, (բացառությամբ Վլադիմիր Սարգսյանին վերագրվող արարքի) հետևաբար անհասկանալի է, թե ինչ հիմքով է քրեական վարույթը տարածքային ընդդատությամբ ուղարկվել ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Մեղադրյալներից Արման Ղազումյանին, Հարություն Ղազումյանին, Լազր Ափինյանին, Սամվել Հովհաննիսյանին և Նաիրի Մելքումյանին վերագրվող արարքները կատարվել են Վլադիմիր Սարգսյանի օժանդակությամբ,

2021 թվականի մարտի 17-ից 2023 թվականի փետրվարի 20-ը ներառյալ ժամանակահատվածում, սակայն վերջիններիս ներկայացված մեղադրանքներում ընդհանրապես նշում չկա, թե իրենց վերագրվող արարքները որտեղ են կատարել: Դատարանը փաստում է, որ նույն մեղադրական եզրակացությամբ, նաև՝ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում, առկա են տվյալներ առ այն, որ մեղադրյալներն իրենց վերագրվող արարքները կատարել են 2021 թվականի մարտի 17-ից 2023 թվականի փետրվարի 20-ը ներառյալ ժամանակահատվածում, այսինքն՝ մինչև Վլադիմիր Սարգսյանի բնակության վայրում՝ Երևան քաղաք Բաղրամյան 77/5 հասցեից սերվերային համակարգը խուզարկությամբ հայտնաբերելու պահը, հետևաբար, առնվազն կարելի է առերևույթ պարզված համարել, որ մեղադրյալներից Վլադիմիր Սարգսյանին վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ենթադրյալ արարքն ավարտվել է 2023 թվականի փետրվարի 20-ին՝ Երևան քաղաքում՝ 2023 թվականի փետրվարի 21-ից 22-ն ընկած ժամանակահատվածում Վլադիմիր Սարգսյանի բնակության վայրում՝ Բաղրամյան 77/5 հասցեում կատարվել է խուզարկության, որի արդյունքում առգրավվել են համապատասխան էլեկտրոնային սերվերները: Այսպիսով, նախնական դատաքննության ընթացքում քննարկելով քրեական գործի ընդդատության հարցը, Դատարանը փաստում է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ մինչդատական վարույթի ընթացքում, նախ առերևույթ հնարավոր չի եղել պարզելու մեղադրյալներ Արման Ղազումյանին, Հարություն Ղազումյանին, Լազր Ափինյանին, Սամվել Հովհաննիսյանին և Նաիրի Մելքումյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, և երկրորդ՝ մեղադրյալներից Վլադիմիր Սարգսյանին վերագրվող արարքն առերևույթ ավարտվել է Երևան քաղաքում, իսկ նախաձեռնված թիվ 83154324 մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս՝ Երևան քաղաքում: Անդրադառնալով հանրային մեղադրողի այն կարծիքին, որ քրեական գործն ընդդատյա է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ մեղադրյալներին պատկանող ընկերությունները գրանցված

են պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության Տավուշի մարզային մասնաճյուղ, Դատարանն արձանագրում է, որ միայն այն փաստը, որ այդ ընկերությունները գրանցված են եղել պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության Տավուշի մարզային մասնաճյուղ, ինքնին չի նշանակում, որ ենթադրյալ հանցանքները կատարվել են Տավուշի մարզում, քանի որ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայությունը մեկ միասնական մարմին է: Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի իրավակարգավորումները, Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործը ընդդատյա չէ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այն պետք է փոխանցել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, քանի որ այդ դատարանի դատական տարածքում է գտնվում տվյալ քրեական գործով մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, բացի այդ՝ դատարանի դատական տարածքում է ենթադրաբար կատարվել նաև վերջին հանցանքը: (…)»[7]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հունվարի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ հարկ է արձանագրել, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փոխելով վարույթի տարածքային ընդդատությունը, առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.*

Նախ և առաջ պետք է արձանագրել, որ թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթում ներգրավված է թվով 6 մեղադրյալ, որոնց նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել «ՀԱՐՈՒԹ96», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ», «ՍԻԴ» «ՍԱՄՎԵԼ 2018» և «ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ» Ա/Ձ ընկերությունների իրական

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 17, թերթեր 37-40:

շրջանառությունը և առանձապես խոշոր չափերով հարկ չվճարելու նպատակով հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու համար:

Վերոհիշյալ բոլոր ընկերությունները գրանցված են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության Տավուշի մարզային մարմնում, հետևաբար մեղադրյալներին մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքները կատարվել և ավարտվել են Տավուշի մարզում, բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումը կիրառելի է այն դեպքում, երբ հնարավոր չէ պարզել ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, մինչդեռ գործի նյութերից ակնհայտ է, որ վերոհիշյալ ընկերությունների գործունեության հասցեն է Տավուշի մարզը, բացի այդ, ըստ մեղադրական եզրակացության բոլոր մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքներն ավարտվել են 2023 թվականի փետրվարի 20-ին, հետևաբար կիրառելի չէ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը և հիմնավոր չէ այն դատողությունը, որ Վլադիմիր Սարգսյանի մասով արարքն ավարտվել է Երևան քաղաքում, ուստի վերջին ենթադրյալ հանցանքի կատարման վայրով պայմանավորված գործի քննությունը պետք է իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում: (…)»[8]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 17, թերթեր 70-73:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[9]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[10]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի*

---

[9] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[10] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[11]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված

---

[11] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Իրավաբանական անձի ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի կամ պատասխանատու այլ անձի կողմից հարկերը, տուրքերը կամ այլ վճարները խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկը, տուրքը կամ այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով կամ ժամկետներում չներկայացնելը կամ հաշվետվության, հաշվարկի, հայտարարագրի կամ հարկը, տուրքը կամ այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթի մեջ խեղաթյուրված տվյալ մտցնելը կամ հարկման օբյեկտը թաքցնելը կամ խաբեության այլ դրսևորումը՝*

(…)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է պատասխանատու անձի կատարման համար պարտադիր ցուցումներ տալու, նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող կամ նրա գործունեությունը փաստացի ղեկավարող այլ անձի կողմից՝ պատասխանատու անձի անունից կամ միջոցով՝

(…)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) առանձնապես խոշոր չափերով՝ (…)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ մինչդատական վարույթի ընթացքում առերևույթ հնարավոր չի եղել պարզել մեղադրյալներ Ա.Ղազումյանին, Հ.Ղազումյանին, Լ.Ափինյանին, Ս.Հովհաննիսյանին և Ն.Մելքումյանին վերագրվող ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, իսկ մեղադրյալ Վ.Սարգսյանին վերագրվող արարքն առերևույթ

ավարտվել է Երևան քաղաքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[12]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ բոլոր ընկերությունները գրանցված են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության Տավուշի մարզային մարմնում, գտել է, որ մեղադրյալներին վերագրվող հանրորեն վտանգավոր արարքները կատարվել և ավարտվել են Տավուշի մարզում:

Անդրադառնալով նախաքննության կատարման վայրի ուժով սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հարցին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ այդ կանոնը կիրառելի է միայն այն պարագայում, երբ ենթադրյալ հանցանքի կատարման վայրը պարզել հնարավոր չէ, որպիսին սույն դեպքում բացակայում է:

Միաժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է, որ ըստ մեղադրական եզրակացության բոլոր մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցանքներն ավարտվել են 2023 թվականի փետրվարի 20-ին, հետևաբար կիրառելի չէ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը հիմնավոր չի համարել նաև այն դատողությունը, որ Վ.Սարգսյանի մասով արարքն ավարտվել է Երևան քաղաքում, ուստի, վերջին ենթադրյալ հանցանքի կատարման վայրով պայմանավորված, գործի քննությունը պետք է իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի քրեական դատարանում[13]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ ըստ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների՝ ենթադրյալ հանցանքների օբյեկտիվ կողմը դրսևորվել է «ՀԱՐՈՒԹ 96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ

[12] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[13] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և «ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ» ԱՁ-ի իրացման իրական շրջանառությունները թաքցնելով և առանձնապես խոշոր չափերով հարկ չվճարելու նպատակով ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելով: Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վերոնշյալ ընկերությունները և ԱՁ-ն հաշվառված են և գործունեություն են իրականացնում Տավուշի մարզում[14]: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ գործողությունների կատարման վայր պետք է դիտարկել Տավուշի մարզը:

16. Միաժամանակ, հարկ է նշել, որ սույն վարույթով ենթադրյալ հանցանքներն ավարտվել ոչ թե Վ.Սարգսյանի կողմից Երևան քաղաքում գտնվող էլեկտրոնային սերվերային համակարգը սպասարկելով, այլ «ՀԱՐՈՒԹ 96», «ՍԻԴ», «ՍԱՄՎԵԼ 2018», «ՆՅՈՒ ՍԻԹԻ», «ՆՅՈՒ ՍԻԹԻ ԴԻԼ» ՍՊ ընկերությունների և «ՀԱՍՄԻԿ ԱՂԱՎԵԼՅԱՆ» ԱՁ-ի իրական շրջանառությունները թաքցնելով և վերոնշյալ ընկերությունների և անհատ ձեռնարկատիրոջ հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելով, հետևաբար ընդունելի չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ սույն վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

17. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հիմնավոր է համարում նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն հետևությունը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը սույն դեպքում կիրառելի չէ՝ դրանում նախատեսված պայմանների բացակայության պատճառաբանությամբ:

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթն

[14] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 109, 117, 123, 129, 136, 143:

ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

19. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ՏԴ/0295/01/24 վարույթն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արման Լևոնի Ղազումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Հարություն Արարատի Ղազումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Լազր Աշոտի Ափինյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Սամվել Հայկազի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Նաիրի Գագիկի Մելքումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Վլադիմիր Հարությունի Սարգսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով թիվ ՏԴ/0295/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ